ՇԻՐԱԿԻ ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ՋՐԱՆՑՔԸ

Գ. Վ. ՇԻՐՄԱԶԱՆ

XIX դարի ընթացքում, ինչպես և XX դարի սկզբում, բազմիցս առաջ է քաշվել Ախուրյանից ջուր հանելու և Շիրակի դաշտի բերքատու հողերը (շուրջ 12 000 դեսյատին, մոտ 13 700 հեկտար) ոռոգելու հարցը։ Բանն այն է, որ դաշտը չնայած իր բարեբեր լինելուն, լավ բերք էր տալիս միայն բարենպաստ տարիներին, իսկ չորային տարիներին, որոնք շատ հաճախ էին պատահում, ոչ միայն ապարդյուն էր անցնում գյուղացիության չարքաշ աշխատանքը, այլև հաճախ աշխատավորությունը սովի էր դատապարտվում։

Բերքատվությունը հիմնականում կախված էր ամառվա քամիների ուղղությունից, որոնք փչում էին հացաբույսերի աճման ու հասունացման շրջանում։ Առավել մեծ վնաս էին հասցնում Ղարսի անջրդի ու չորային հարթավայրից փչող հարավ-արևմտյան քամիները։

Կովկասի փոխարքային՝ 1896 թվականի ապրիլի 15-ին գրած իր զեկուցագրի մեջ, Կովկասի ջրային տեսուչ Վեյս-ֆոն Վայսինգոֆը գրել է. «Այդ քամիների ժամանակ դաշտավայրի (Ալեքսանդրոպոլի) ամբողջ բուսականությունը սիստեմատիկաբար չորանում է, հողը ճաքճքրում է և խոնավությունից զրկված հացաբույսերը բոլորովին ոչնչանում են։ Հողի մշակության մեջ ազգաբնակչության ներդրած աշխատանքը ամբողջովին կորչում է։ Միայն առանձին նախալեռնային վայրերում, շատ քիչ քանակությամբ հողակտորներ (շուրջ մի քանի տասնյակ դեսյատին) ոռոգվում են լեռներից հոսող աղբյուրների ջրերով և այդ տեղերում բերքատվությունը միջակից չի իջնում»[1]։

Սակայն, չնայած այդպիսի ծանր դրության, աշխատավորությունն ի վիճակի չէր որևէ բան անելու։ Իսկ ցարական կառավարությունից միջոցներ սպասելն անհուսալի էր։ Միակ հույսը մնում էր մասնավոր նախաձեռնության վրա, բայց այն ևս անհրաժեշտ օժանդակություն չէր գտնում ցարական կառավարության բյուրոկրատ պաշտոնյաների կողմից։

1894 թ. ինժեներ Ագապովը դիմում է նոր կազմակերպված Կովկասի ջրային տեսչությանը խնդրելով իրեն իրավունք տալ կոնցեսիոն կարգով ջուր հանելու Ախուրյանից՝ Շիրակի դաշտի 12 000 դեսյատին (13 700 հեկտար) տարածության ոռոգման համար։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ Ախուրյանից, որի հունը շատ ավելի ցածր է, քան ջուր պահանջող դաշտերը, ջուր հանելը և ոռոգման վայրը հասցնելը պահանջում էր մեծ և տեխնիկապես դժվարին աշխատանք ու խոշոր դրամական ներդրումներ։ Ըստ նախնական ավյալների դետի վրա պետք է կառուցվեր ամբարտակ և մայր-մագիստրալ առու անցկացվեր մոտ 35 կիլոմետր երկարությամբ։ Ջրանցքի գլխամասը նախատեսվում էր կառուցել Ջելաբ Քեչուա (Ջրածոր) գյուղի մոտ։ Բացի գլխավոր ջրանցքից պետք է կառուցվեին նաև մոտ 70 կիլոմետր բաժանարարներ և ոռոգիչներ։

Նման խոշոր աշխատանքի համար պահանջվում էր, բացի նյութական ու տեխնիկական հսկայական միջոցներից, նաև մեծ գումար՝ մոտ 400 000 ռուբ. ոսկով, այսինքն՝ մի դեսյատինին մոտ 35 ռուբլի։

Ինժեներ Ագապովի ծրագրերը, սակայն, չիրագործվեցին։ Ցարական իշխանությունը չէր, որ պետք է լուծեր մի այնպիսի կենսական ու կարևոր խնդիր, ինչպիսին ոռոգումն էր։

Ալեքսանդրոպոլի քաղաքային վարչությունը, իր 1906 թ. օգոստոսի 12-ի որոշմամբ, մի խումբ քաղաքացիների նախաձեռնությամբ նորից և բարձրացնում ջրանցքի կառուցման հարցը։ Այս անգամ խոսքը վերաբերում էր միայն քաղաքային վարչությանը պատկանող 3000 դեսյատին հողամասի ոռոգմանը։ Ոռոգելի տարածության սահմանափակումը բացատրվում է մասամբ

[1] Հայկական ՍՍՌ Ջրային մինիստրության արխիվ, գործ № 393, էջ 641

Գյուղատնտեսական կանոնադրության 120-րդ հոդվածի պահանջով, որի համաձայն ջրի իրավունքը վերապահվում էր հողատիրոջը։

Նորից է սկսվում գրագրությունների անվերջանալի շարանը՝ Երևանի նահանգապետից մինչև Կովկասի փոխարքան։ 1912 թ. փետրվարի 14-ին Քաղաքային վարչությունը իրավունք է ստանում Ախուրյանից 50 բաշ մեկ վայրկյանում 1250 լիտր ջուր ստանալ և սկսել հետազոտման և նախագծման աշխատանքները։

Վերջապես Քաղաքային վարչության 1912 թ. նոյեմբերի 13-ի որոշմամբ հատուկ հանձնաժողով է ստեղծվում աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման համար։ Հետազոտման և նախագծման աշխատանքները հանձնարարվում են ինժեներ Զավալիշինին, որի ներկայացրած նախագիծը հաստատվեց ինժեներ հիդրավլիկների խորհրդակցության կողմից 1914 թ. հունվարի 3-ին և նույն թվականի մարտի 18-ին հաստատվեց նախահաշիվը՝ 225000 ռուբլի՝ 3000 դեսյատին տարածությունը ջրելու համար։ Շինարարությունը կատարվելու էր չորս տարում։ Զավալիշինի կազմած նախագծի համաձայն ջրանցքն սկիզբ էր առնելու Ալեքսանդրոպոլից մոտ 25 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ջրաձոր (Ջելաբ Քեչուտ) գյուղի մոտից։

Սկսվում են նախապատրաստական աշխատանքները։ Սակայն վրա է հասնում առաջին համաշխարհային պատերազմը։ Այդ իրադրության մեջ բնականաբար ժամանակավորապես մոռացվեց ջրանցքի շինարարության այնքան կենսական հարցը։ Հետագայում կատարված փորձերը ևս ապարդյուն են անցնում։

Այսպիսով Շիրակի ջրանցքի կառուցումը, որի մասին Շիրակի աշխատավորությունը երազել էր մոտ կես դար, սպասում էր իր լուծմանը։

Այդ հարցի դրական լուծումը տվեց միայն նորաստեղծ Սովետական Հայաստանի բանվորագյուղացիական իշխանությունը։

Դեռ ծանր վերքերը չբուժած երկիրը ձեռնամուխ եղավ Շիրակի ջրանցքի կառուցմանը։ 1921 թ., երբ դեռ թուրքական զավթիչներից լրիվ չէր ազատագրվել երկրի զգալի մասը, հայ մարդու ստեղծագործ ու շինարար տենչը, մանավանդ երկրի նոր ու իսկական տիրոջ՝ բանվորի ու գյուղացու անսպառ եռանդն ու վերստեղծման թռիչքը՝ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ իրականություն դարձրեց տասնամյակների երազանքը։ Ոչ մի երկրում, ոչ մի ուրիշ իշխանություն չէր կարող առաջ բերել այնպիսի խանդավառություն ու խիզախում, ինչպիսին կենսագործեց մեր՝ որբերի և գաղթականների կիսավեր երկիրը։

Ալեքսանդրոպոլի Սովետների գավառային անդրանիկ համագումարում (1921 թ., հուլիս) որոշում է կայացվում, չնայած գոյություն ունեցող ծանր պայմաններին, անմիջապես սկսել ջրանցքի շինարարության աշխատանքները։ Ստեղծվում է ջրանցքի շինարարության վարչություն[1]։

Նախ անհրաժեշտ էր վերջնականապես լուծել ջրանցքի ուղղության, գլխամասի վերջնական վարիանտը։ Մի շարք լրացուցիչ ուսումնասիրություններից և մասնագիտական խորհրդակցություններից հետո վերջնականապես հաստատվեց Կապսի վարիանտը՝ որոշ ուղղումներով՝ նախորդ (Ջելաբ-Քեչուտի) վարիանտի փոխարեն։

Ջրանցքի ամբողջ երկարությունը հավասար է մոտ 42 կիլոմետրի, որից սկզբնական 1195 գծ. սաժենը—2545 գծային մետրը անցնում է երեք թունելներով, մնացած տարածությունը՝ բաց առվով։

Ստորև տալիս ենք ջրանցքի առանձին կառուցվածքների հակիրճ նկարագրությունները։

Ջրանցքը սկիզբ է առնում Լենինական քաղաքից մոտ 12 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Կապս գյուղի շրջակայքից, 779,83 սաժեն — 1661,04 մետր բարձրությամբ ծովի մակերևույթից։ Ջրի հոսանքը այստեղ հանգիստ է, ափերը ամուր։ Այստեղ գետի ամբողջ լայնությամբ կառուցված է ջրթող ամբարտակ—34,80 մետր երկարությամբ և 4,06 մետր բարձրությամբ։ Ամբարտակը կառուցված է բազալտ քարից՝ ցեմենտի շաղախով։ Դրսից ամբողջովին երեսպատված է բազալտ քարով։ Ամբարտակի մարմնի ձախ կողմում, որտեղից սկիզբ է առնում ջրանցքը, դրված են երկու դոնակ-շլյուզներ. մեկը ջուրն ուղղում է առաջին թունելը, մյուսը լվացման շլյուզ է։

[1] Անդրանիկ վարչությունը բաղկացած էր Արամ Շահգելդյանից (նախագահ), Արսեն Եսայանից (փոխնախագահ) և շինարարության պետ ու գլխավոր ինժեներ Հովսեփ Տեր-Ասատուրյանից։ Ապա 1923 թ. Արամ Շահգելդյանի՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ, գործի անցավ նոր վարչությունը Արսեն Եսայանի նախագահությամբ ու Արմենակ Հովսեփյանի և Հ. Տեր-Ասատուրյանի անդամակցությամբ, որը և փառավոր վախճանի հասցրեց այդ դժվարին գործը։



Նկ. 1. Շիրակի ջրանցքի վարչություն. նստած են աջից ձախ՝ ինժ. Նատալյա Մարտիրոսյան, Արմենակ Հովսեփյան (փոխնախագահ), Արսեն Եսայան (նախագահ), ինժ. Հ. Տեր-Ասատուրյան (շինարարության պետ), ինժ. Օհանյան



Նկ. 2. Ջրանցքի թունելի ելքը

Ամբարտակի շինարարության ընթացքում գետի ջրից պաշտպանվելու համար, աջ ափին կառուցվեց մի առանձին ջրատար թունել՝ 48,44 մետր երկարությամբ, 2,1×2,1 կտրվածքով։ Ժամանակավորապես կառուցված պատնեշ-դամբայի օգնությամբ գետի ամբողջ ջուրը ուղղվում էր այդ թունելի միջով և այդպիսով հնարավորություն ստեղծվում համեմատաբար փոքր ջրհան աշխատանքներով կառուցել ամբարտակը։ Լվացման շլյուզի գերը կարող է կատարել և աջափնյա թունելը։ Փակելով նշված շլյուզները, գետի ջրի մակարդակը բարձրանում է և թունելի սկզբում կառուցված շլյուզի միջոցով ջուրը անցնում է առաջիս մեծ թունելը։

Առաջին թունելի երկարությունը՝ սկզբից մինչև Կապսի ձորը 1922,73 մետր է։

Երկրորդ թունելը՝ 482,28 մետր երկարությամբ, սկիզբ է առնում Կապսի ձորում և վերջանում է մի քարոտ չոր ձորակի մեջ, որը հատում է Արուրյանը։

Երրորդ թունելը՝ 145,12 մետր երկարությամբ սկսվում է նույն ձորակի ձախ բերանից։ Այստեղից ջրանցքը բաց առվով հոսում է Շիրակի արգավանդ գաշտով։ Առաջին թունելը իր սկզբնական մասում մոտ 400 մետր անցնում է գետին զուգահեռ, ափից մոտ 50 մետր հեռավորությամբ։ Այս հանգամանքը շինարարության ժամանակ բավական օժանդակեց, հնարավորություն տալով փորելու կողքի բովանցք-գետնանցք մոտ 13 մետր երկարությամբ, մեծացնելով աշխատանքների ճակատը։

Նկ. 3. Թունելի ելքի մոտ Աջից ձախ՝ Երեմ Բակունց, Արամ Շահգելդյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Գարեգին Լևոնյան, Արսեն Ցսայան

Բացի կողքի գետնանցքից աշխատանքի ճակատը մեծացնելու, աշխատանքները արագացնելու ու թունելում օգավոխությունը ավելացնելու նպատակով կառուցված էին ևս երկու ուղղահիգ շտոլնյաներ՝ մեկը մոտ 54 մետր, մյուսը՝ 40 մետր խորությամբ. բացի այդ, աշխատանքները տարվում էին և ճակատամուտքերից՝ պորտալներից։ Առաջին թունելում աշխատանքները տարվում էին, թեպետ տարբեր ժամանակներում, ութ տեղից։

Երկրորդ թունելի աշխատանքները տարվում էին միայն երկու կողմից՝ ճակատամուտքերից։ Երրորդ թունելում աշխատանքները տարվում էին երեք կողմից՝ հյուսիսային ճակատամուտքից և երկու կողքի գետնանցքներից։ Թունելների վերջնական միացումը և փորման աշխատանքները կատարվել են 1924 թ. օգոստոսի 20-ին։ Հաշվելով աշխատանքների սկիզբը 1922 թ. հոկտեմբերի 29-ից, թունելների փորման աշխատանքները տևել են մոտ 1 տարի 10 ամիս։

Թունելները փորվել են թե՛ ձեռքով, և թե՛ մեխանիկական ձևով։ Երկրորդ և երրորդ թունելներում, հաշվի առնելով նրանց կարճությունը և այն հանգամանքը, որ աշխատանքները տարվում էին ձմռան ամիսներին, գործադրվում էր բացառապես ձեռքի աշխատանք։

Առաջին թունելում գործադրվում էր թե՛ ձեռքի, և թե՛ մեխանիկական հորատում։

Մեխանիկական հորատումով աշխատանքները կատարվում էին երկու Ատլաս-դիզելի կոմպրեսորներով՝ 23 ձիու ուժի կարողությամբ։ Մեխանիկական ձևով աշխատելիս արտադրողականությունը, իհարկե, երկու անգամ բարձր էր։ Պայթուցիկ նյութը հիմնականում դինամիտն էր։ Պայթեցման հետևանքով գոյացող հողը տեղափոխվում էր վագոնիկն-երով։ Հորատման ժամանակ ուղղամասերը հիմնականում լուսավորվում էին յուղի լապտերներով։ Օդափոխությունը ձմեռը կատարվում էր բնական ձևով, իսկ ամառը, երբ դրսի և ներսի ջերմաստիճանները համարյա հավասարվում էին, օդափոխությունը կատարվում էր ճնշված օդով՝ պերֆորատորների միջոցով։

Թունելները անցնում էին տարբեր ապարների միջով. 1) միաձույլ բազալտների, որոնք որևէ արհեստական ամրացում չէին պահանջում, 2) տուֆերի միջով, որոնք եթե նույնպես չէին պահանջում փորման ընթացքում որևէ ամրակապման աշխատանք, ապա պահանջում էին երեսպատման աշխատանքներ. 3) խառն կավային, հրաբխային և այլ թույլ շերտերից, որոնք պահանջում էին ամրացման աշխատանքներ անցկացման-փորման ժամանակ և քարի կամ բետոնե շարվածքով երեսպատում։

Ստորև տալիս ենք թունելների ամբողջ երկարությամբ տարբեր շերտերի ապարների դասավորումը.

1. Միաձույլ բազալտներ	330,77 մ.	13 %
2. Բազալտ կավի միջնաշերտով . . .	542,16 մ.	20 »
3. Նստվածքային ապարներ	938,96 մ.	37 »
4. Բեկորա-անդեզիտային	320,06 մ.	12,5 »
5. Տուֆ	192,06 մ.	7,5 »
6. Խտացած կավ և ավազ	226,11 մ.	10 »
	2550,13 մ.	100 %

Թունելների փորման ընթացքում շինարարները հանդիպեցին մի մեծ դժվարության։ Համարյա ամբողջ երկարությամբ երևան էին գալիս մեծ քանակությամբ աղբյուրներ և աշխատանքը կատարվում էր ջրով հագեցված շերտերում։ Հորերում փորված էին առանձին ջրհորներ, որտեղ հավաքվում էին երևան եկող ջրերը և ապա հատուկ ջրհաններով հանվում դուրս։ Ջուրը հանվում էր նաև թունելների հատակում փորված առվակների միջոցով։

Առաջին թունելի սկզբից մոտավորապես 650 մետր հեռավորության վրա կառուցողները անսպասելիորեն հանդիպեցին լողիկ շերտին, որից խուսափելու համար ստիպված եղան որոշ տարածությամբ թունելի հիմնական ուղղությունը փոխել 62 աստիճան անկյունով, ապա նույն անկյունով նորից դուրս գալ հիմնական ուղղությունը՝ անցնելով վտանգավոր շերտը։

Թունելների կտրվածքները տարբեր էին և փոխվում էին նայած անցնող շերտերի տեսակներին։ Նրանց երեսպատումը նույնպես տարբեր էր, ըստ անցնող հողաշերտերի տեսակների։ Թույլ շերտերում՝ ավազային ու կավային, երեսպատումը կատարված է տաշված բազալտի քարերով։ Ավելի ամուր շերտերում, որոնք մեծ ճնշում չէին գործում, երեսպատումը կատարվում էր անմշակ քարի շարվածքով և ցեմենտի սվաղով։ Թունելների այն մասերը, որոնք անցնում էին տուֆի միջով, ցեմենտի շաղափով է սվաղված։

Ավելորդ չենք համարում հետաքրքրական տալ թունելների անցկացման ընթացքում կատարված աշխատանքների քանակը և նրանց արժողությունը.

1. Փորվածքը

ա) բազալտապատում	6311.0 խ. մ.
բ) տուֆապատում	825,40 խ. մ.
գ) նստվածքային և բեկորային ապարներում . .	11652 խ. մ.
դ) կավի և ավազի	32530 խ. մ.
Ընդամենը . . .	22041.40 խ. մ.

2. Շարվածք

ցեմենտի շաղախով	6991.2 խ. մ.
խամ շարվածք շաղախով	1553.6 »
Չոր	3398,5 »
Ընդամենը	11943.3 խ. մ.

Այսպիսով մի գծային մետր թունելի պատրաստման համար կոստարված են.

Փորման աշխատանք	մոտ 9.1 խ. մ.
Քարի շարվածքներ ցեմենտի շաղախով	3.3 »
Չոր խամ շարվածք	1.3 »

Մեկ խ. մ. թունելի փորման աշխատանքի արժեր

ա) բաղալտում	26 ռ. 80 կ.
բ) տուֆում	12 ռ. 36 կ.
գ) ապարներում, որոնք պահանջում էին ամրակապում	20 ռ. 60 կ.

Թունելի մի գծային մետր փորման միջին արժեքը հավասար էր մոտ 100 ռուբլու։

Առաջին 11,7 կիլոմետր (11 վերստ) ջրանցքի արժողությունը ներառյալ 2545,4 մետր երկարությամբ թունելներինը հավասար էր 1.400.000 չերվոնեց ռուբլու, որից 50 տոկոսը Հայաստանի տեղական միջոցներն էին. 50 տոկոսը՝ Անդրժողկոմխորհի միջոցները։

Բայց դրանով չէր վերջանում Շիրակի ջրանցքի շինարարությունը. անհրաժեշտ էր այն շարունակել երկաթգծից այն կողմ, հասցնելով մինչև Իլխարի-Վենիամին գյուղի հողերը՝ անցկացնել մոտ 31 կիլոմետր բաց առու, անհամեմատ ավելի հեշտ պայմաններում, քան առաջին 11,7 կիլոմետրը։

Շիրջրանցքի աշխատանքները լրիվ ավարտվեցին 1929 թ.։

Շիրակի ջրանցքի տնտեսական նշանակությունը.— Ինչպես արդեն նշեցինք, Շիրակի դաշտի բերքատու սեահողը անջրդի պայմաններում տալիս էր անկայուն և սակավ բերք, Գյուղացին, համաձայն մինչ 1914 թ. եղած տվյալների, դժվարությամբ էր ստանում իր շարքաշ աշխատանքի դիմաց միայն եռապատիկ բերքը։

Ախուրյանից ջուր ստանալուց հետո ոչ միայն բերքը կայուն դարձավ, այլև, որ կարևոր է, հնարավորություն ստեղծվեց մշակել Հայաստանում բոլորովին անծանոթ մշակույթ՝ շաքարի ճակնդեղ։

Շաքարի ճակնդեղի մշակությունը հնարավորություն ստեղծեց կառուցել Սպիտակի շաքարի գործարանը։ Ինչպես հայտնի է, շաքարի ճակնդեղի մշակման և շաքարի պատրաստման փորձը մեզանում եղել է դեռ 1850—1857 թվականներին երբ ներսես Աշտարակեցին էջմիածնում մտցրել էր նորակառույց արհեստական լճի հիման վրա շաքարի ճակնդեղի մշակությունը և շաքարի գործարան էր կառուցել։ Բայց այդ փորձը մնացել էր որպես փորձ և միայն 80 տարի անց Շիրակի և ապա Նալբանդի ջրանցքի կառուցմամբ ստեղծվեցին կայուն պայմաններ շաքարի արդյունաբերության զարգացման համար։

Հենց Շիրակի ջրանցքի գործարկմամբ սկսվել էին շաքարի ճակնդեղի մշակման առաջին փորձերը, բայց դրանք եղել են առանձին. եզակի փորձեր. 1928 թ. Լենինականի, Արթիկի և Սպիտակի շրջաններում մշակվել է միայն 12,2 հեկտար. 1930 թ. 142,2 հեկտար, 1931 թ.՝ 503,1 հեկտար, 1932 թ.՝ արդեն միայն Շիրակի ջրանցքի գոտում մշակվում էր 842 հեկտար շաքարի ճակնդեղ։ Ինչպես հայտնի է. արդեն 1929 թ. Շիրակի ջրանցքի հիման վրա կազմակերպվեց սովխոզ, որը սկսեց մշակել շաքարի ճակնդեղ, և 1933 թ. արդեն դրա տարածությունը 955 հեկտար էր։ 1958 թ. Սովետական Հայաստանում ցանվել է շաքարի ճակնդեղ՝ Ախուրյանի շրջանում (հիմնականում Շիրակի ջրանցքի գոտում)՝ 2240 հեկտար, որից կոլտնտեսություններում՝ 2175 հեկտար։ Սպիտակի շրջանում՝ 1440 հեկտար, որից կոլտնտեսություններում՝ 1314 հեկտար։ Ընդամենը՝ 3680 հեկտար, որից կոլտնտեսություններում՝ 3489 հեկտար։

Պետք է նշել և այն, որ ինչպես ցույց էին տվել հենց առաջին փորձերը, Հայաստանում մշակվող ճակնդեղը թե՛ իր բերքատվությամբ և թե՛ իր շաքարի պարունակությամբ հետ չէր մնում Ուկրաինայում կամ ուրիշ վայրերում մշակվող շաքարի ճակնդեղից։ Ճակնդեղի շաքա-

Նկ. 4. Թունելի ելքի մոտ՝ Աջից՝ ձախ՝ Արսեն Եսայան, Հովսեփ Տեր-Աստվածատրյան, Սարգիս Արապ՛ոնյան-Լուկաշին, Երեմ Բակունց, պրոֆ. Ավետիս Բալանթար, Սարգիս Կասյան, Սուրխաթյան



Նկ. 5. Շիրակի ֆրանցբի ակվեդուկը

բապարունակություններ հասնում էր 19,5 %-ի, մինչդեռ Կուրսկում՝ 17,5 %-ի, Վրաստանում՝ 14 %-ի։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ շաքարի ճակնդեղի մշակությունը և դրա հիման վրա շաքարի արդյունաբերության զարգացումը էլ ավելի բարձրացրին Շիրակի ջրանցքի տնտեսական նշանակությունը։

Նշենք, որ նախքան Շիրակի ջրանցքի անցկացումը հացահատիկի բերքատվությունը մի հեկտարից հավասար էր շուրջ 5 ցենտների, գարու բերքատվությունը՝ 5,5 ցենտների, մարգագետինների խոտինը՝ մոտ 8,3 ցենտների։

Պաշտոնական տվյալների համաձայն Շիրակի ջրանցքի շրջանում 1959 թ. վաստակն ջրվել է 10 818 հեկտար, այդ թվում շաքարի ճակնդեղ՝ 1930 հ (ամբողջ տարածության մոտ 18 տոկոսը), աշնանացան՝ 2274,5 հ, գարնանացան՝ 2191 հ, եգիպտացորեն՝ 831 հ, կորնգան՝ 1848,5 հ, բանջարանոցներ՝ 447,5 հ, այգիներ՝ 256 հ, այլ ծառատունկեր՝ 367, տնամերձներ՝ 453, գետնախնձոր՝ 86, կտավհատ՝ 142 հեկտար։ 1959 թ. շաքարի ճակնդեղի միջին բերքատվությունը հավասար էր 257 ցենտների, պլանով նախատեսված 238 ցենտների դիմաց։ Ցորենի միջին բերքատվությունը՝ 18—19 ցենտներ, գարու բերքատվությունը՝ 22—23 ցենտներ[2]։ Այսպիսով ցորենի բերքատվությունը ոռոգումից հետո բարձրացավ երեք-չորս անգամ։

Լենինականի և շրջակա գյուղերի բարդավաճման ու կուլտուրական զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ ոռոգող ջուրը։ Պետք է նշել, որ մինչև սովետական կարգերի հաստատումը Լենինականը չուներ ոչ ջրմուղ և ոչ էլ թիչ թե շատ կանոնավոր կոյուղի։ Քաղաքի բնակչությունն օգտվում էր ջրհորներից, որոնք մեծ մասամբ գտնվում էին հակասանիտարական պայմաններում և ինչպես Հայաստանի այլ քաղաքներում ու բնակավայրերում (Երևան, Կիրովական և այլն) հանդիսանում էին հիվանդությունների տարածման աղբյուր։ Ջրհորների ջուրը միևնույն ժամանակ շատ կոշտ էր և քանակով անբավարար։

Մի քանի խոսք Լենինականի և շրջակայքի կանաչապատման մասին։ Հին Ալեքսանդրոպոլը ուներ ծուռ, անհարթ, խորդուբորդ փողոցներ, մեծ մասամբ խարխուլ տնակներով, բոլորովին մերկ, անհրապույր տեսք։ Քաղաքում համարյա բացակայում էր բուսականությունը։ Ամբողջ քաղաքում, բացի կայարանից և Ջերբեզի ձորից, ծառերի քանակը հազիվ թե մի քանի հարյուրից անցներ։ Եվ այդ սակավաթիվ ծառերը գտնվում էին առանձին ունևորների տների բակերում։ Տեղացիներն այդ մերկությունը բացատրում էին ջրի սակավությամբ և կլիմայական անբարենպաստ պայմաններով։

Ծառատնկման առաջին մեծ և գրական փորձը կատարվեց կայարանամերձ արվարձանում, որտեղ դարասկզբին, օգտվելով ջրի առկայությունից և հողային հարմարությունից, տեղի գծամասի պետ, ծառի սիրահար ինժեներ Ս. Յա. Կրակովսկին իր տնամերձ բավական մեծ տարածության վրա հիմք դրեց մի լավ պուրակի։ Ծառերի տարբեր տեսակներից մի քանիսը ցրտահարվեցին, բայց նորից տնկվեցին և ի վերջո ստացվեց երկաթուղայինների համար մի լավ հանգստյան վայր։ Այդ փորձը ապացուցեց, որ Լենինականի կանաչապատման հարցը հանգում է արհեստական ոռոգմանը և խնամքին։ Շիրակի ջրանցքի գործարկումից հետո Լենինականն սկսեց կանաչապատվել և այժմ իր լայն, գեղեցիկ շենքերով զարդարված փողոցներով, իր կանաչ ծառուղիներով թողնում է հաճելի տպավորություն։

Ջրանցքը տնտեսական մեծ նշանակություն ունեցավ նաև քաղաքի էլեկտրիֆիկացման գործում։ Բանն այն է, որ հին Ալեքսանդրոպոլն ուներ մի փոքրիկ՝ 200 կիլովատանոց մասնավոր ջերմաէլեկտրակայան, որը տպարանի հետ կազմակերպել էր հին մանկավարժ Արմենակ Զախմախսազյանը։ Տարեկան ծախսը հազիվ հասնում էր 60 հազար կվ/ժ.։ Նոր աճող արդյունաբերական Լենինականին անհրաժեշտ էր էլեկտրական ուժի բազա։ Այդ նպատակով Շիրջրանցքի ջրի օգտագործումը նախատեսվում էր գեռ նախնական ծրագրով։ 1922—1923 թվականներին վերջնական ծրագիրը կազմելիս որոշվեց նաև Լենինականի էլեկտրակայանի տեղն ու կարողությունը։

Պետք է շեշտել, որ հիդրոկայանի կառուցումը և գործարկումը շատ հրատապ և կարևոր բնույթ էր դառնում, երբ 1925 թ. Սովետական Հայաստանը ձեռնամուխ եղավ Իվանովո-Վոզնեսենսկի բանվորներից նվեր ստացված մանածագործարանի կառուցմանը։

---

[1] Դ ո ւ մ ե դ ի ն, Ճակնդեղի մշակությունը Հայաստանում, «Խորհրդային Հայաստան», 1932, 22 սեպտեմբերի, № 222 (3618)։

[2] Ջրային մինիստրության Ախուրյանի ոռոգման սիստեմի վարչության 1959 թվականի հաշվետվությունից։

Հիդրոկայանի վերջնական տեղը որոշված էր ջրանցքի գլխամասից մոտ 2,9 կիլոմետր (2 վերստ 362 սաժեն) հեռավորության վրա, այնտեղ, ուր ջրանցքը թունելներից դուրս էր գալիս հարթավայրը։

Շնորհիվ այն հանգամանքի, որ հիդրոկայանը կառուցված է ոռոգման ջրանցքի վրա, նրա արժողությունը Միության այլ հիդրոկայանների համեմատությամբ ավելի ցածր էր։

Ավելորդ չենք համարում նշելու, որ Լենինականի հիդրոկայանը կառուցելու պահին էլեկտրաէներգիայի պահանջը նախատեսվում էր միայն 1560 կիլովատ, այդ թվում տեքստիլ գործարանին՝ մոտ 883 կլվ. քաղաքի լուսավորությանը՝ 515 կլվ. տպարանին՝ 7 կլվ և այլն։ Տարեկան ծախսը նախատեսվում էր 5 300 հազար կիլովատ ժամ։ 1959 թ. Լենինականը սպառում էր մոտ 28 միլիոն կլվ/ժամ, այդպիսով սովետական տարիներին ծախսը աճել է համարյա 450 անգամ։

Պետք է նշել, որ 40-ական թվականներից արդեն զգացվում է ոռոգման ջրի պակասը, մանավանդ ԼԹԷ հաշվի առնվի հիդրոկայանի պահանջը։ Այդ իսկ պատճառով հնարավորություն չկա ջրանցքի հիման վրա էլ ավելի ընդարձակել շարարի ճակնդեղի տարածությունը։ Այժմ օրվա հրատապ խնդիր է դարձել նոր հողերի օգտագործման հարցը Ախուրյանի աջափնյա մասում, Բայանդուրի հարթավայրի և այլ տեղամասերի օգտագործման հարցը։ Եվ քանի որ՝ այժմյան դրությամբ Ախուրյանը ի վիճակի չէ բավարարելու ջրի սուր կարիքը, ապա անհրաժեշտ է որոնել ջրապահեստների նոր միջոցներ, առաջին հերթին ձեռնարկել Ախուրյանի ջրամբարի կառուցմանը։ 1950 թ. արդեն կառուցված և շահագործման է հանձնված Արփի լճի ջրամբարը Ղուկասյանի շրջանում։

Ջրանցքի կառուցողները.— Պետք է նշել, որ Ախուրյանի ձորում պատնեշի կառուցումը և թունելների փորման աշխատանքները, մանավանդ այնպիսի դժվարին երկրաբանական պայմաններում, ինչպիսիք գոյություն ունեին տվյալ դեպքում, պահանջում էին հատուկ եռանդ և փորձառություն։ Բոլոր դժվարությունների վրա հարկավոր է ավելացնել նաև նորաստեղծ Սովետական Հայաստանի ծանր պայմանները։ Եվ իրավացի էր այն ժամանակվա Ժողկոմխորհի նախագահ Լուկաշինը, որը 1925 թ. հունիսի 21-ին, Շիրակի ջրանցքի բացման առթիվ, գրում էր.

«Դժվարագույն տնտեսական պայմաններում, հրաժարվելով իր ամենանվազագույն պահանջների բավարարումից, բանվորն ու գյուղացին ձեռք-ձեռքի տված՝ խորհրդային իշխանության ղեկավարությամբ, մոտավորապես երկու ու կես տարվա ընթացքում հայտնաբերեցին չտեսնված տոկունություն, զոհաբերություն, այնքան գիտակից պատրաստակամություն ու հաղթելու երկաթյա կամք։

Շիր-Լեն-ջրանցքը մի հսկա կոթող է, որ ընկճեցնում է մեր թշնամիներին ու հակառակորդներին և, որ գլխավորն է, բանվորա-գյուղացիական մասսաներին չտեսնված հավատ է ներշնչում իրենց ուժերի, իրենց ապագայի նկատմամբ։ Շիր-Լեն-ջրանցքը սոցիալիզմի մի զգալի մասն է կազմում մեր սոցիալիստական հայրենիքում։

Սոցիալիզմը գեղարվեստական հնարքի կամ ապագայի երազանք չէ։

Սոցիալիզմը համառ, տոկուն, մասսայականորեն հայտնաբերվող գիտակից ու կազմակերպված ստեղծագործություն է, որ իր առաջ այնքան դժվարություններ, դեռ այնքան խոչընդոտներ ունի։

Շիր-Լեն-ջրանցքն աշխատանքի հաղթական կոթողն է։

Թող նա օրինակ լինի մեր այսօրվա և վաղվա սոցիալիստական ստեղծագործության համար»[1]։

Այո, այսօր ևս, համարյա 35 տարի անց, հիացմունք ու հարգանք են ներշնչում ջրանցքի կառուցողների մեծ բանակը, շինարարության պարտիական կազմակերպիչները ի դեմս Արամ Շահղելդյանի, Արսեն Նասյանի, Արմենակ Հովսեփյանի, Արմենակ Թորոսյանի։

Կառուցողների եռանդուն բանակի հրամանատարն էր հայտնի ինժեներ Հովսեփ Տեր-Աստվածատրյանը։ Նա 1922 թ. դեկտեմբերին, ստանձնելով այդ պատասխանատու պաշտոնը, ուշադրությամբ գործի կպավ։ Առաջին հերթին անհրաժեշտ էր ստեղծել միջին և կրտսեր հրամանատարների մի ուժեղ ջոկատ, որը և հաջողվեց նրան։

Համարյա աշխատանքի անցնելուն պես նա աշխատակցության հրավիրեց կին ինժեներ Նատալյա Մարտիրոսյանին. այդ ընտրությունը շատ հաջող էր և լավ արդյունք ունեցավ։ Նատալյա Մարտիրոսյանն այն հազվադյուտ կին ինժեներներից էր, որին հաջողվել էր բարձրա-

[1] «Խորհրդային Հայաստան», 1925, 21 հունիսի, № 140 (1191)։

գույն կրթություն ստանալ նախահեղափոխիչ ծանր պայմաններում։ 1922—1923 թվականներին Շիրակի՝ վերին աստիճանի ցուրտ եղանակներին, երիտասարդ կին ինժեները անձնվիրաբար կատարում էր իր հետազոտությունները Ախուրյանի անմատչելի ձորում, պատնեշի տեղի և թունելների վերջնական հետազոտությունը։ 1923 թ. մայիսից նա ստանձնում է շինարարության տեխնիկական բաժնի ավագ ինժեների պատասխանատու աշխատանքը։ Նրա անմիջական մասնակցությամբ մշակվում են Ախուրյանի ձորում կառուցվող պատնեշի, թունելների, ջրանցքի բոլոր արհեստական կառուցվածքների նախագծերը։ Այստեղ պետք է նշել, որ Ն. Մարտիրոսյանի ինժեներական ունակությունները էլ ավելի ցայտուն կերպով դրսևորվեցին հետագայում, երբ Շիրակի ջրանցքի աշխատանքներն ավարտվելուց հետո իր ղեկավար Տեր-Աստվածատրյանի ու այլ մասնագետների հետ աշխատանքի անցավ Հայաստանի Ջրային տնտեսության վարչությունում և ապա մինիստրությունում։

Շիրջրանցքի կառուցման աշքի ընկնող հրամանատարներից էր նաև Ալեքսեյ Ալեքսեևիչ Յակիմովը։ Նա ղեկավարում էր ամենապատասխանատու աշխատանքները՝ պատնեշի կառուցումը և թունելների անցկացումը։ Նա աշխատում էր ծանր պայմաններում, երբ Կապուտ շկային ոչ բնակարանային, ոչ կոմունալ, ոչ սննդի նորմալ պայմաններ, նա անձնվիրաբար տանում էր իրեն հանձնարարված դժվարագույն աշխատանքները։

Այնպիսի մի շինարարությունում, ինչպիսին Շիրակի ջրանցքն էր, պետք է ուժեղ և ամուր լիներ վարպետների, արհեստավորների և բանվորների բանակը։ Եվ նա իրոք այդպիսին էր։ Սրանց թվում աշքի էին ընկնում Դարեգին Նալչրանյանը՝ պրոֆլիազոր, 1918 թ. պարտիայի անդամ, վականագործ Սերգո Դյուլեցյանը, տոհմական քարտաշ-որմնադիր Միրզաջան Հովհաննիսյանը, որ ավելի շատ հայտնի էր Վարպետ Միրզաջան անունով և որի աշխատանքային գործունեության 40-ամյակը Լենինականի աշխատավորությունը տոնեց ջրանցքի բացումից մի քանի օր անց։ Նա իր արհեստով աշխատել էր մի քանի քաղաքներում՝ Բարվում, Դոնի շրջանում, Թիֆլիսում, Երևանում և այլն։ 1920 թ. Եգոր Սեոյանի հետ նա գալիս է Ալեքսանդրոպոլ և ակտիվորեն մասնակցում Մայիսյան ապստամբությանը, մտնում է Կոմպարտիայի շարքերը։

Ոչ պակաս հմտություն ու փորձ ցուցաբերեցին տոհմային քարտաշ և որմնադիր հույն վարպետ Գիորգի Պոլիցիգին, բանվորներ Աղասի Դարբինյանը, Դմիտրի Խրիստաֆորովը, Վլադիմիր Մանջվիձեն, Սանասար Դարբինյանը, Համբարձում Հարությունյանը, Կոնստանդին Լիպարիդին և շատ ուրիշներ։

Ահա և ուստա Մացակը, կամ ինչպես տեղացիներն են անվանում նրան, Թամրազենց Մացակը։ Սա հայտնի էր ոչ միայն որպես հմուտ հյուսն, այլև որպես որմնադիր ու քարտաշ, որը մինչև Շիրակի ջրանցքի շինարարությունը մասնակցել էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի նոր շենքի կառուցմանը, ինչպես և Էջմիածնի Վեհարանի և այլ նշանավոր շենքերի կառուցմանը։

Ուստա Մացակը բանվորների շրջանում հռչակված էր որպես ինքնուս բանաստեղծ։ 67-ամյա ծերունին մի խանդավառ ոտանավոր նվիրեց Շիրջրանցքին («Հարսանիքը Լենջրանցքի»), որի սկզբի տողերը զետեղում ենք ստորև.

Եկեք, եկեք, Լենինական քաղաքացիք,
Մեր շրջանի բազմաչարչար խեղճ գյուղացիք,
Որ դարերով մեր դաշտերի կուրծքն եք ճեղքել,
Չի-գութանի սուր խոփերով մի կերպ ապրել.
Վար ու ցանքը դուք արել եք դատարկ հույսով,
Պահ եք տվել սերմը հողին ձեր աղոթքով։
Արտ ու այգի աղոթքներով չեն կանաչում,
Եթե նրան առատ-առատ դու չես ջրում։

Ջրանցքի բացումը.— Ինչպես հայտնի է, 1925 թ. մարտի սկզբներին Անդրկովկասի երեք եղբայրական ռեսպուբլիկաները բացառիկ հրճվանքի օրեր էին ապրում։ Մարտի 3-ին Թիֆլիսում իր աշխատանքներն սկսեց Միութենական Կենտկոմգործկոմի երրորդ նստաշրջանը։ Թիֆլիս էին ժամանել Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ականավոր գործիչներ, որոնք նստաշրջանից հետո այցելեցին նաև Ադրբեջանի ու Հայաստանի քաղաքները ու մի շարք այլ բնակավայրեր, արդյունաբերական ու շինարարական կենտրոններ։

Մարտի 8-ին արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը, Բուդյոննին և ուրիշներ ժամանեցին Լենինական։ Դիտելով մի շարք հիմնարկներ, այցելելով Պոլիգոնը, որտեղ տեղավորված էին

ամերիկյան որբանոցները, հյուրերը եղան Շիրակի ջրանցքի շինարարությունում, որտեղ պետք է կատարվեր ջրանցքի փորձարկումը։

Հյուրերը ոտքով անցան ամբողջ թունելը՝ մինչև Ախուրյանի պատմական ձորում կառուցված պատնեշը։ Պատնեշի մոտ կառուցողների կողմից հյուրերին ողջունեց փականագործ Սերգո Գյուլեցյանը։ Ժամը 15-ն անց 45 րոպե առաջին անգամ իջեցվում են պատնեշի արգելակները։ Պատնեշի առաջ Ախուրյանի ջուրն սկսում է բարձրանալ։ Մի ժամ անց՝ ժամը 16-ն անց 14 րոպեին սեղմվում է էլեկտրական կոճակը. պայթում է թունելի սկզբում շինված փայտյա փականը և ջուրն սկսում է հոսել։

Հավաքված բանվորները, շրջակա գյուղերի գյուղացիությունը մեծ ոգևորությամբ են ընդունում ջրի հոսանքը։ Ախուրյանի նեղ բազալտյա կիրճում պատմության մեջ առաջին անգամ զինվորական նվագախումբը նվագում է պարտիական հիմնը՝ Ինտերնացիոնալը։ Փորձարկումը հաջող անցավ և մեծ տպավորություն գործեց ներկա եղողների վրա։

Անցավ ևս մի քանի ամիս, և մի կիրակի օր՝ հունիսի 21-ին, Շիրակի դաշտի աշխատավորությունը՝ ամբողջ Սովետական Հայաստանի աշխատավորությունը, տոնում էր մեծ տոն՝ Շիրակի ջրանցքի պաշտոնական բացումը։ Ի շարս բազմաթիվ հյուրերի, բացման հանդեսին ներկա էին Ֆրիտիոֆ Նանսենը իր ղեկավարած հանձնաժողովի անդամների հետ, Անդրկովկասյան Ֆեդերացիայի ղեկավարները և մի շարք այլ անձինք։

Ֆրիտիոֆ Նանսենն իր հայտնի աշխատության մեջ հատուկ էջ է նվիրել Շիրակի ջրանցքի բացմանը։ Նկատի ունենալով այդ էջերի անչափ հետաքրքիր լինելը, մենք ավելորդ չենք համարում բաղվածորեն մեջ բերել դրանք։

«Սակայն բոլշևիկները — գրում է Նանսենը,— եռանդուն կպան գործի, և ուղղակի անհասկանալի է թվում, թե ինչպիսի արդյունքների են հասել նրանք շատ համեստ միջոցներով սակավ տարիների ընթացքում։ Այնտեղ, ուր իշխում էին բառսը, թշվառությունը և սովը, հաստատվեց կարգ ու կանոն։ Այսօր բոլորը վերելքի ուղին են բռնել, հասարակության օրգանիզմը զարգանում է շնորհիվ կառավարության ձեռներեցության։

Հինգ տարվա շնորհալի և եռանդուն աշխատանքի շնորհիվ պարագաները զգալիորեն փոխվել են, երկրի որոշ մասերում հիմա թերևս ավելի լավ է, քան պատերազմից առաջ»[1]։

Անցնելով ջրանցքի բացման տոնակատարությանը, Նանսենը գրում է.

«Դաշտի բոլոր ճանապարհներով կատարյալ ժողովուրդների գաղթ էր տեղի ունենում տղամարդիկ, կանայք և երեխաներ ամեն հասակի, ոտով գնացող և ամեն տեսակի կառքերի մեջ լեփ-լեցուն մարդիկ։ Կառքերը եզներ կամ ձիեր լծած՝ զարդարված խայտաբղետ ժապավեններով, հազարավոր զինվորներ ձիով ու ոտով—բոլորը ուրախ և տոնական տրամադրությամբ»։

Ցերեկվա ժամը մոտ 12-ին Ժողկոմխորհի նախագահ Սարո Համբարձումյանը և ուրիշներ փակում են պատնեշի շլյուզի դռնակները։ Ախուրյանի ջրի մակարդակը բարձրանում է։ Կառավարության նախագահը և պաշտոնական անձինք բաց են անում թունելի առջևի շլյուզի դռնակները։ Դռնակի անիվի պտտացնողներից մեկն էր նաև Ֆրիտիոֆ Նանսենը։

Ախուրյանի ժայռոտ խոր ձորը թնդում է ժողովրդի հրճվանքի ձայներից, կեցցեների և ուռաների բացականչություններից։ Հենց ձորում կայանում է բացման հանդեսն ու միտինգը։ Թունելներից դեպի բաց առուն, դեպի Շիրակի լայնածավալ դաշտը սկսեց արագորեն հոսել ջուրը։

Մի շարք պաշտոնական ողջույններից հետո ելույթ ունեցավ Ֆրիտիոֆ Նանսենը, որին հավաքված բազմությունը ընդունեց արտակարգ օվացիաներով։ Նանսենը իմիջիայլոց ասում է.

«Ես ինձ բախտավոր եմ զգում, որ ներկա եմ այսօրվա մեծ հանդեսին։ Հայ ժողովուրդը ամենից շատ է տառապել համաշխարհային պատերազմից։ Այն բազմաթիվ ավերածությունների հետքերը, որ նկատելի են ձեր երկրում, ապացույց են դրան։ Սակայն հայ ժողովրդի ջանասիրությունը և եռանդը այժմյան խաղաղ պայմաններում մեծ գործեր կարող են կատարել։ Ես հավատացած եմ, որ այս ջրանցքին պիտի հետևեն ուրիշ ջրանցքներ, և շինարարության ուրիշ օրինակներ»։

Երևկոյան տեղի ունեցավ Կենտգործկոմի հանդիսավոր նիստ։

---

[1] Fridtjof Nansen, Bertrogenes Volk, Leipzig, 1928, էջ 326։ Fridtjof Nansen, L'Arménie et le proche Orient, Paris, 1928, էջ 179—181։ «Նոր ուղի», Երևան, 1930, № 4—5, էջ 114։

Շիրակի ջրանցքը գրականության մեջ.— Դժվար թե Սովետական Հայաստանի մի որևէ նորակառույց այնքան արտացոլված լինի գրականության մեջ, որքան Շիրակի ջրանցքը, և դա բնական է։ Չէ որ ջրանցքը նորաստեղծ Սովետական Հայաստանի չարքաշ բանվորության ու գյուղացիության ստեղծագործ աշխատանքի առաջին պտուղն էր, առաջին մեծ գործը։

1921 թ., երբ դեռ նոր էին սկսվել Շիրակի ջրանցքի աշխատանքները, Ագատ Վշտունու խմբագրած «Մուրճ» ամսագրում լույս տեսան Գուրգեն Մահարու և Նաիրի Զարյանի բանաստեղծությունները նվիրված Շիրջրանցքին։

Պրոլետարական մեծ բանաստեղծ Հակոբ Հակոբյանը իր հայտնի «Բոլշևիկ է Շիրկանալը» պոեմում գովերգեց Շիրակի ջրանցքի մեծ ու գեղեցիկ շինարարությունը։ Պոետը միաժամանակ գովերգում է Շիրակի դաշտի ապագան.

Բոլշևիկ է Շիրկանալը... այն վայրերը լերկ ու բարբադ,
Որոնք իրենց ծնված օրից այրի էին—մերկ անապատ,
Այսօրից հետ հագնելու են սիրակարոտ հարսների պես...

Շինարարությանն են նվիրված «Հոկտեմբեր» միության հրատարակությամբ Գուրգեն Մահարու «Շիրակի ջրանցքը», Ն. Զարյանի «Ջրանցքի կապույտ երկրում», Մկրտիչ Արմենի «Շիրկանալը», «Կանալը», «Կանալը Լենինականի» գործերը։ Ապա լույս են տեսնում Գ. Սարյանի «Շիրակի հարսանիքը», Սարմենի «Դաշտերը ժպտում են» բանաստեղծությունները։ Շիրակի ջրանցքին պոեմներ են նվիրում Ալագանը՝ «Շիրակի դաշտ», «Շիրկանալ», Սողոմոն Տարոնցին՝ «Լուկաշին»։ Շիրակի ջրանցքի շինարարության պետի տեղակալ Արմենակ Հովսեփյանը շինարարության նկարագրությանն է նվիրել իր «Շիրակի ջրանցքը» գրքույկը, որը լույս է տեսել 1924 թ.։ 1925 թ. Եղիա Չուրարը լույս է ընծայում իր «Ջրանցքներ» գրքույկը, Եղիշե Չարենցը լույս է ընծայում իր «Գյումրի» պոեմը։

ШИРАКСКИЙ КАНАЛ ИМЕНИ ЛЕНИНА

Г. В. ШИРМАЗАН

(Резюме)

В первые же годы установления Советской власти в Армении было начато строительство одного из сложных гидротехнических сооружений того времени — Ширакского канала. Ширакское плато, на котором расположен гор. Ленинакан, несмотря на высокую отметку (1470—1600 метров над уровнем моря), еще в древности славилось своим плодородием. Однако все же урожаи были низкими, особенно в засушливые годы. Для обеспечения высокой урожайности и поднятия культуры земледелия необходимо было искусственное орошение. Единственный водоисточник — река Ахурян — протекает в глубоком ущелье, и для вывода воды из него необходимы были значительные и трудные в техническом отношении работы. Провести такие работы своими средствами земледельцы не имели возможности. Надеяться на государственную помощь в дореволюционные годы было безнадежно.

Трудящиеся Армении под руководством Коммунистической партии смело взялись за выполнение этой трудной работы. Бурная горная река на отметке около 1700 метров была перекрыта водосливной плотиной длиной в 34,7 и высотой в 4,05 метра. Через приемный шлюз вода поступает в первый тоннель длиною 1922,73 метра, затем во второй (482,28 м) и третий (145,12 м). Начальная часть Ширакской оросительной системы до пересечения с железной дорогой с лета 1925 г. была пущена в эксплуатацию. Открытие Ширакского канала, состоявшееся 21 июня 1925 г., превратилось в большой праздник для армянского народа.

Экономическое значение Ширакского канала велико не только для Ленинаканского плато, но и в целом для Советской Армении. Средняя урожайность пшеницы после применения орошения поднялась до 15—19 центнеров, ячменя — до 22—23 центнеров, т. е. в три-четыре раза. С пуском Ширакского канала и со строительством Ленинаканской ГЭС впервые в Армении в сельскохозяйственный оборот была введена новая ценная культура — сахарная свекла и разрешен также вопрос электроснабжения Ленинакана, Артика и окрестных сел.